# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶ

# ՀՐԱՄԱՆ № 76-Լ

«01» 10 2025թ. ք. Երևան

## ՀԱՆՁՆՈՒՄ-ԸՆԴՈՒՆՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Գուրգեն Գագիկի Մադոյանին Երևան քաղաքի Աջափնյակ և Դավթաշեն վարչական շրջանների դատախազի պաշտոնին փոխադրելու և Երևան քաղաքի Էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների դատախազի պարտականությունների կատարումը նույն վարչական շրջանների դատախազի տեղակալ Էդուարդ Հրայրի Հովհաննիսյանին վերապահելու մասին ՀՀ գլխավոր դատախազի 15.09.2025թ.՝ համապատասխանաբար՝ N 388-Ա և N 390-Ա հրամանները և այն, որ անհրաժեշտ է նրանց միջև կատարել վարույթների, փաստաթղթերի և գույքի հանձնում-ընդունում, ղեկավարվելով «Դատախազության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 2-րդ մասի 7-րդ կետով և 30-րդ հոդվածի 3-րդ մասով՝

**Հ ր ա մ ա յ ու մ  ե մ՝**

1. Կատարել Գ. Մադոյանի կողմից՝ Երևան քաղաքի Էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների դատախազության վարույթների, փաստաթղթերի և գույքի հանձնում, իսկ Է. Հովհաննիսյանի կողմից՝ ընդունում, որի համար ստեղծել հանձնախումբ՝ հետևյալ կազմով.

***Հանձնախմբի ղեկավար՝***

Գրիգորյան Լիլիթ - Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի տեղակալ

***Հանձնախմբի անդամներ՝***

Մելքոնյան Հակոբ- Երևան քաղաքի Էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների դատախազի տեղակալ

| | |
|---|---|
| Առաքելյան Ռուբեն - | Հայաստանի Հանրապետության դատախազության ֆինանսատնտեսական վարչության պետ |
| Նազարեթյան Արմինե - | Հայաստանի Հանրապետության դատախազության արխիվի բաժնի պետ |
| Ղահրամանյան Մարուշ - | Հայաստանի Հանրապետության դատախազության ընդհանուր բաժնի պետի պաշտոնակատար |
| Մանուկյան Լիաննա - | Հայաստանի Հանրապետության դատախազության առաջին բաժնի պետ |
| Մուրադյան Մերի - | Երևան քաղաքի Էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների դատախազության տարածքային բաժնի պետ: |

2. Հանձնախմբի ղեկավարին՝ հանձնման-ընդունման ակտի մեկ օրինակը Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության կազմակերպական-վերահսկողական և իրավական ապահովման վարչություն ներկայացնել մինչև 2025 թվականի հոկտեմբերի 20-ը:

**ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ԵՐՐՈՐԴ ԴԱՍԻ ՊԵՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱԿԱՆ** **Ա. ՎԱՐԴԱՊԵՏՅԱՆ**